

ՄԱՐԱՏ ԲԻՐԱՏ
ՆԱԲԱԳՐՈՒՅԻՆ «ՓԻԻՆԻԿ», Ի
ԱՂԵՖԱՆՈՐԻԱ



S. Zurat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
ՆԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆ
ԿԱՆԵԿԻ Է
ՁԵՆԱԳԻՐԵՏՆՆԵՐ
ՆՈՒԽՐ

ՓԻԻՆԻԿ

ԱՐՏԱՍՍՆՄԱՆ
ՆԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6
ԱՂԴԵՐ ԿՐՆՈՒՆԵ-
ՈՒԽՆ ԴԱՏԱՆՈՐ
ԱՅԱՄԱՆՆԵՐՈՂ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ԼԻՆԳՎԱԲՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՍԿԻ ԿՐԻՍՏՈՒՆԵՐԸ

ԶԵԹՈՒՆԷՆ

Կ.Պոլսոյ փոռնջ շարժաթերթէն կ'արտադրենք հետեան թղթակցութիւնը, փոխիկի ընթերցողներուն գաղափար մը տալու համար ներկայ կացութեանը վրայ մեր ամենուս սիրած Զեթունին, որուն տառապանքները մեղմելու միակ նպատակովը հաստատուած է արդէն Աղեքսանդրոյ մէջ, Զերուհի Բարեւիրաց ընկերութիւնը:

«Զեթուն». 26 Մարտ 1903.

Զէյթունի մէջ բժիշկի մը առագ կարեւորութիւնը. — Վարժարանները:

Գոհութեամբ կարգացուցեալ տեղոյս մէջ Պատ. փոնջի 2822րդ թիւը՝ Պատրիարքարանի վերաբերեալ լուրերու բաժնին մէջ թէ՛ «Բարեսէր անձ մը լրագիրներէն իմանալով որ՝ Զէթունի տղայոց մէջ ճարակած է ծաղկատը, 25 ոսկի դրկեր է Պատրիարքարան, ծաղկատը անհետացնելու առողջական միջոցներու համար» Ապրիլն յաւելտ այն յիշատակութեան արժանի անձինք, որ կը փութան՝ կարօտելոյ երկնցնել իրենց ողորմած ձեռքեր, որպէս այս անգամ սոյն

բարեսէր անձը: Թէև յօղուածագիրը չէր ուզած մանրամասնաբար նկարագրել վերոյիշեալ ախտի տեղոյս մէջ զործածները. այլ ինչ հարկ մանրամասնութեանց մէջ մտնելու, քանի որ զոհերու ստուար թիւն իսկ կրնայ հետեցուիլ աւելին: Յաւալին այն է որ, սոյն ախտի առաջին երեւման առթիւ չէ որ կը ցաւիմք. դժբախտաբար քանի՛ քանի՛ անգամներ երեւցած և հազարաւոր անմեղ մանկիկներու կորստեան ականատես լինելէ յետ՝ եօթամեայ մի զաւարով թողած է զմեզ, ուրիշ տեղուանք ես թափառելու և իւր անգլթութիւններն ի գործ դնելու: Եւ միթէ ան է միայն պատճառը՝ մեր հոգեհատորներուն սարսժամ մահուամբ ի հող տապանի իջնելուն. յայտ է թէ՛ ո՛չ: Ուրեմն ձգենք զայս. ես կ'ուզեմ ա՛լ աւելին ցոյց տալ, հանապազօրեայն մատնանիշել և դարման ինդրել. դարման մը, որ անհրաժեշտ է, և բերաւորներու կեանքը պիտի փրկէ, քանի որ պիւղաքաղաքիս մէջ օրըստօրէական նորանոր հիւանդութիւններ անպակաս են, թէ՛ ամառ և՛ թէ՛ ձմեռ. եղանակի փոփոխում չ'ընեն երբէք տարբերութիւն և յաճախ թեթեւ մի հիւանդութիւնով տառապալն է որ

հետզհետէ կրսկոի մօտենալ գերեզմանին. և այս՝ անշուշտ առողջապահութեան նախնական կարեւոր դարձաններու չ'պոյութենէն մեր ընտանեաց մէջ. առկին 10—12 տարեկան մի աղջիկ լոկ պարզ ցրտառութեան մը հետեանքով կ'առաջնորդուի ի շիրիմ. անդին 28—30 տարեկան երիտասարդ մը ուրիշ հիւանդութեամբ. և արդէն՝ տեղոյս ի բնէ քարոտ ու լեռնոտ վիճակի ենթակայ լինելուն՝ ստիպուած ենք համայնքս՝ տաժանելի աշխատութեան ենթարկուիլ. և հազուհազ մեր ընտանեաց օրապահիկն հայթայթել: Սոյն աղքատիկ ժողովուրդը ինչպէս կարենայ հոգալ Եկեղեցին, Դպրոցը, և իւր կենաց ամենահարկաւոր պայմաններուն հեղինակը—բժիշկը, որ ամենօրեայ հացէն աւելի հարկաւոր է: Բազմիցս թող օրհնուին բարերարներու անմահ յիշատակներն, որոնք չ'են խնայած ու չ'են խնայեր միշտ իրենց գրամական նուէրներն տեղոյս վարժարանաց համար, և արդէն համայնից ակնյայտ է որ՝ եթէ այս վերջինք բարեսէր անձերու ջանքով եւ ինամքով չ'հոգացուին, տեղոյս ժողովուրդն չ'իրնար ունենալ գոնէ իւր Մաղկոցն. ո՞ր կը մնայ բարեկարգ Նախակրթարան՝ մի քանի կարեւոր ուսուցիչներով: Ահա մեր իսկ աչքով տեսած իրողութիւն մը: Ասիկէ 2 տարի առաջ երբ չորս Մաղկոցներու տարեթուշակի սակաւութեան և նոյն դաստուաց խեղճութեան պտտճառաւ. կրկնակի դիմումներ եղան ի Պատրիարքարան, և սա՝ եկեղեցիներու կողմէ հոգալ հրամայեց, սոյն այս փոքրիկ զբառն անգամ հայթայթելու անկարող գտնուեցան: Տեղոյս չորս եկեղեցիներու տարեկան հասոյթը հապիւ կը բաւէ իրենց տարեկան պարզ պիտճէն փակելու, որով կրթական խնդրոյն համար ասոնցմէ զրամ յուսալ անկարելոյն ձեռնարկել է: Նախորդ ամիսներու մէջ լսեցինք թէ՛ Ս. Պատրիարք Հայրն, մի նամակով իմացուցեր է տեղոյս Փոխառաջնորդին որ, նպատարնկալ վարժարանաց անոնք՝ որք կըրնան իրենց իւզովը տապիւիլ, պիտի դադրին

այլ եւս նպաստ ընդունելէ՝ և անոնց տեղ աւելի աղքատ դպրոցներ պիտի հոգացուին. ասոր վրայ մի հանրագրով դարձեալ խնդրուեր է Ս. Պատր. Հօրմէ, որ բարեհաճի ըստ առաջնոյն շարունակել իւր հոգածութիւնը, և եթէ աղքատ դպրոցներ կը փնտոտի ինամելու, հազալու, մերիններէն աւելի կարօտագոյնը չեմք կարծիք թէ գտնուի: Յայտնի չէ թէ ո՞ր պիտի յանդի Պատրիարքարանի սոյն անօրինութիւն, բայց այժմէն կը համարձակիմ ըսել որ՝ եթէ տեղոյս վարժարանները գրկուին նպաստէ, վարժարան երբէք պիտի չը կարե՞ք ունենալ, մեր տղաքներ բոլորովին ազէտ պիտի մնան, մեր եկեղեցիներ խեղճութեան պիտի մատնուին, վասն զի մի քանի տարիներէ ի վեր բաւական երգեցիկ մանուկներ կուրենամք բարեբախտաբար, այս՝ միայն վարժարաններու շնորհիւ, և այժմ ո՞րքան որ կ'զգամք մեր կորուստները բժիշկի մը չգոյութենէն, բնականաբար նոյնը եւս աւելին պիտի զգամք վարժարաններու մասին: Տեղոյս ժողովուրդը մեծ յոյս ունի թէ՛ Մ. Ս. Պատրիարք Հայրն՝ իւր խոհուն հեռատեսութեամբ ի նկատի առնելով սոյն արգահատելի վիճակը, պիտի զթայ և պիտի բարեհաճի մատաղ մանուկներն չ'հանել կրթական ամենակարեւոր վայրերէն—վարժարաններէն: ՀՐԱՏ»

Այս թղթակցութիւնը կը բաւէ հաստատելու Չեթունի տառապանքին անչափութիւնը:

Դարձա՞ն մը, կ'աղաղակէ Որբ լեռը, դարման մը վէրքերուն իմ աննուած ու արի գաւառիկներուս:

Ո՞վ պիտի տայ այս դարձանը:—Մե՞նք արտասահմանի Հայերուս:

Ու այն ատեն միայն պիտի իրաւունք ունենանք պարծնալու Չեթունով. խեղդե՞նք գճուճ ու գեսնաքարչ կիրքերը, մէկդի նետե՞նք պառակտիչ ողբն, ու ժամ առաջ գործի սկսինք:

Երբ Չեթուն կը խօսի, պէ՛տք է լռէ ամեն հակառակութիւն:

Չեթունի Բարեսիրաց ընկերութեան անդամներուն կը մնայ ուրեմն սպացուցանել թէ իրենք կը գտնուին բարձրութեանը վրայ նպատակին, որ նպատակներուն վսեմագոյնն է:

ԱԶԳԱՅԻՆ

ԲԻՐԱՄԻՏԻ մէջ Մայիս 17 կիրակի գիշերուան ներկայացումը տեղի ունեցաւ. «ՆԿԱՐԻՉԸ» թատերախաղին մէջ ամենէն աւելի յաջողակներ յայտնուեցան Տեառք Լևոն Շիշմանեան ու Շաւարշ. իսկ Տիկին Պերճիկ, իր ստանձնած մանկամարդ օրիորդի փափուկ ու թելադրական գերին մէջ, զուր կը ջանար ծածկել ժամանակին անգութ ու անխուսափելի կոնտրաստները, աւելի մայր մըն էր կարծես քան թէ ազջիկ մը, իր հօր Տիար Լևոն Շիշմանեանի առջև, որ աւելի որդի մըն էր քան թէ հայր մը:

Գալով Տիար Նորիկեանի, յուսացուածէն շատ աւելի յաջողակ երեւցաւ անառակ որդիի, խաղամոլի, դողի և շարագործի այնքան գէտուար գերբերուն մէջ: Կը շնորհաւորենք զինք մասնաւորապէս:

Տիար Լ. Շիշմանեան տեղիս հայ թատերական խմբին մէջ թուրք լեզուին միակ քաջահմուտ գերասանն է, և եթէ այնքան հարազատօրէն թրքական և այնքան պատշաճօրէն գրական իր լեզուն ու արտասանութիւնը չըլլային, պիտի շատ գտնէի իրեն համար այնքան ծափեր ու հիացումներ. Տիար Շիշմանեանի մէջ, թո՛ղ ներուի զետեւ, մէ՛կ բան միայն կը պակսի, — ինչպէս որ հեղինակաւոր բարեկամ մըն ալ նոյնպէս կըսէր անցեալին — կիրքը, ճշմարիտ կիրքը, որ հաւասարապէս կը փնտռուի բանաստեղծներու մէջ:

«Նկարիչը» թատերախաղին համը առինք, բայց, զժբազդաբար, զաւելջատիազը չը տեսանք. վերջին պահուն գուժուեցաւ թէ Տիար Շաւարշ զլիսի պտոյտ (°) ունի հզեր. գիտե՛նք, գիտե՛նք, ատիկայ ներկայացման սկիզբէն կը գուշակուէր:

Դերակատարներէն գոհ մնացինք ընդհանրապէս, բայց օթեակները բազմող մեր թատերասէր հայրենակիցներէն ոմանք թող ներեն, բացառութեան յարգանքով, իրենց զի-

տեւ տալ թէ շատ հաճելի բան մը չըլլար կոր գտնուիլ իրենց օթեակներուն վարի յարկի օթեակին մէջ. հո՛ն վարի օթեակները նստողները զլիսի պտոյտ կունենան յաճախ: Ո՛րքան փափագելի է որ յաջորդ ներկայացումներուն մէջ աւելի՛ յարգէինք կարգը, լրութիւնը, ու խաղին գիտակցութիւնը, և չը խնդայինք հոն ուր որ պէտք է լայնիք...:

— **ՏԻԱՐ ԼԵՒՈՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ** այսուհետեւ պիտի ա՛լ չը մասնակցի թատերական ներկայացումներու. ասիկայ գէշ լուր մըն է մանաւանդ անոնց համար որ կը սիրեն տեսնել Շիշմանեանի ճեմքը թատերաբեմին վրայ:

Թատերաբեմին կանակը զարճընող Տիար Շիշմանեան կ'իմանանք որախութեամբ թէ մօտերս պիտի հրատարակէ «Փոնօկրաֆ» կիսամսեայ գաւեշտահանգէս մը, հայատառ, թրքաբարբառ:

Մեր անկեղծ ու սրաագին խնդակցութիւնները մեր համակրելի նոր եղբայրակցին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀՅԼԼԵՆՕ-ԹՈՒՐԻՔ ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆԸ

Ֆիլիպպե 12 մայիս. Տօքթ. Պէլլօ յոյն երեսփոխան մը, ցնորական ծրագիր մը յղացիր է վերջերս:

Այս երեսփոխանը հիմայ Կ. Պոլիս կը գտնուի, և մահմէտական աշխարհին մէջ, կը քարոզէ արտաոց միութիւն մը թուրքիոյ ու Յունաստանի միջև:

Այս երկու երկիրները, Տօքթ. Պէլլօյի ծրագրին համաձայն, պիտի միանան եղբր մէկ կայսրութեան մէջ միայն, նման Աստրիոյ ու Հունգարիոյ կամ աւելի նման Բրուսիոյ ու միս ալման տէրութիւններուն: Սուլթանը պիտի հռչակուի եղբր Բիւզանդիոնի կայսր, իր նահանգներուն մէջ տարածուած Յոյներուն վեհապետի իր հանգամանքով: Թուրքիան ու Յունաստանը պիտի ա՛լ չունենան եղբր բայց միայն մէ՛կ Պատերազմական նա-

խարարութիւն Կ. Պոլիս, ու մէկ ծովային նախարարութիւն Աթէնք: Երկու Միացեալ Երկիրներուն զիւանագիտական յարաբերութիւնները Կ. Պոլսէ պիտի ուղղուին:

Կրօնն թէ Տոքթ. Պէլլօ պիտի ունկընդրութիւն խնդրէ Սուլթանէն ու Մեծ-Եպարքուէն, անոնց ներկայացնելու համար իր յատակագիծն ու քաղաքական ծրագիրը:

Կը հաստատուի նաև թէ՛ Յոյները յօժարակամ պիտի ընդունին եղբր Տօքթ. Պէլլօյի երազած իրերու կարգը: Բայց այն ատեն ինչ կ'ըլլայ Ս. Սօֆիայի վրայ նորէն ծածանող յոյն զրօշակին հելլենական երազը: Չըսուիր նոյնպէս թէ՛ ինչ կը խորհի Եօրկիոս թագաւորը, Տօքթ. Պէլլօյի նախաձեռնութեանը մասին:

—Սօժիա, 16 մայիս. Նախարարութիւնը հրատարեցաւ, կացութիւնը դժուար է: Զօրավար Բէթրօֆ պիտի կազմէ նոր զահլիճը: Ֆէրտինանա իշխանին զիտաւորութիւնը կամաց կամաց կը յայտնուի. Բէթրօֆ զօրավարը պուլկար բանակին ամենէն աւելի ձեռնհաս սպան է ու իր նախորդներուն, Բարրիքօֆի ու Սալօֆի համախոհ մը, որոնց հետ կատաղի հակառակորդ մ'եղած է Տանէֆի ու անոր ուսուսէր կամ զանքովական կուսակցութեան:

Կ'երկայ թէ Ֆէրտինանա իշխանը, ա'լ անկարող ինքզինք զսպելու, բացէ ի բաց կը դաշնակցի պատերազմասէր կուսակցութեան, Թուրքիոյ դէմ, համոզուած ըլլալով թէ՛ պուլկար բանակը պիտի կրնայ օսմանեան արշաւանքի մը դիմադրել և յուսալով թէ՛ Պալքաններուն մէջ ասանկ պայթում մը շուտով և անպահանջօրէն պիտի առաջ բերէ միջազգային բարդութիւններ, որոնց արգիւնքը նպաստաւոր պիտի ըլլայ Պուլկարիային:

Ապրողը պիտի տեսնէ:

—Պուլկար կառավարութիւնը մերժել է ետքը Բ. Դրան ծանօթ ծանուցագիրը. ինք զրկեց նոր մը, Վիէնայի, Բէթրպուրկի ու Բարիզի զահլիճներուն, բողոքելու համար Դրան ամբաստանութեանց դէմ, Մակեդո-

նիոյ վերջին զէպքերուն, մանաւանդ Սելանիկի ոճիրներուն պատասխանատուութիւնը նետելով իր վրայէն, և ամբաստանելով իր կողմէն Վիմիայն թրքական իշխանութիւնն ու զօրագնդերը, որոնց ծայրայեղութիւնները, կ'ըսէ ծանուցագիրը, անմեղ Պուլկարներու դէմ գործուած, ի վերջոյ ժողովուրդը պիտի մղեն յուսահատութեան ու պիտի ստուարացնեն ոճրագործներուն թիւը: Երանուցագիրը կ'առաջարկէ որ Մակեդոնիոյ եւրոպական հիւպատոսներուն աջակցութեամբը զսպուին ոճիրները:

Իսկ թուրք կառավարութիւնը, իր կողմէն ուրիշ ծանուցագիր մը դրկած է տէրութեանց, խիստ ազդու, որով կը խնդրէ որ Պուլկարիան ձախու բերուի:

—Պուլկար եկզարիք պաշարուած է սասիկաններով իր Օրթաքէօյի ապարանքին մէջ: Պուլկար գործակալին քարտուղարին Պ. Նիքիֆօրօֆի տունը խուզարկութիւն ըրին ու թղթերը գրաւեցին: Դիւանագիտական գործակալը, Պ. Իվան Սթէֆանօֆ կէչօֆ, ստիպեց Դուռը զանոնք անմիջապէս ետ դարձնելու: Առետրական գործակալներուն դէմ ալ միևնոյն հալածանքը կը շարունակուի. Օսմ. կառավարութիւնը կը կասկածի թէ անոնք շատ հաճոյակատար կը գտնուին ասպտամբական տարրերուն հանդէպ. վերջապէս, Դուռը կամ իր գործակալները պարզապէս կուզեն զրդուել Պուլկարիան. այս է հոս տիրող տագնապութիւնը, որ անձանօթ չէ պաշտօնական շրջանակներուն մէջ:

—Կ. Պոլիս 10 Մայիս. Ճիշդ ու ճիշդ հայկական ջարդին շրջանը կը յիշեցնէ մայրաքաղաքը, Սելանիկի զէպքերէն ի վեր. ամեն փոզոց լրտես մը, հինգ զօրքի հետ. ծանր ու զանդազ կը քալէ, անտարբեր ակնարկներ կը նետէ աջ ու ձախ. զօրքը կը ծաղրէ: Դեսպանատանց ըզվերը գաղտնի ոտտիկաններ կը պտըտին, հարիւր քայլ կ'ընեն կանգ կ'անուսն անկիւն մը: Բ. Դուռը հրսկողութիւնը կրկնապատկուած, չորս զոներուն կրեքը զատապարտուած են. բաց են,

բայց մարդ չիրնար անցնիլ դիւանադիտական սրբաւայրը. մէկ զուրը միայն կը բանի, Մեծ Եպարքոսութեան զուրը: Ռուսական և ասորիական զեռպանատանց վրայ խիստ մօտէն հսկողութիւն կայ, որովհետէ ասոնք ամենէն աւելի սպանացուած կը թուին: Օսմ. Դրամատունը պահապան զօրքերով շրջապատուած է միշտ: Բայց այսքան խիստ հսկողութիւններէն պէտք չէ հետեցնել թէ՛ իրօք ոստիկանութիւն մ'ունինք հոս. ընդհակառակն, զազմանի զործակալները չ'են կրնար առաջն առնել ո և է պատահականութեան: Սոալին լուրի մը սասիկանութիւնը կը տենդատի, քանի մ'օրեր կ'անցնին հանդարտութեան մէջ. յետոյ, ամենը կը մոռցուի. ուրեմն, յեղափոխներու համար արգելք մը չը կայ գործելու:

— Հիլլիի բաշան կը ծանուցանէ թէ՛ երկար ատենէ ի վեր ծրագրուած ու Ալբանիացիներուն դէմ պատրաստուած արշաւանքը սկսած է և անարգել առաջ կը տարուի:

Պաշտօնապէս կը ծանուցուի թէ՛ Սօֆիայի Գոմիթէներէն մէկուն նախկին պետ Զօնչէֆ զօրավարը վերջերս, Սելանիկի մօտ, կոխներէն մէկուն մէջ ինկած ու մեռած է: Մեռած է նաև, Տէլչէֆ, Ներքին կազմակերպութեան պետը: Վերջապէս յեղափոխական զօմիթէին պետերէն մէկը, Սերէդի Բանիձա գիւղին մէջ բռնուած, սպանուեր է և իր 11 ընկերներն ալ գերի բռնուած են:

Հեռագիր մը կիմացնէ թէ՛ Սելանիկի մէջ, աւստրիական Բօսթատան զբացի շէրհորի մը մէջ քանի մը քիւր տինամիթ ու պատրոյգներ գտած են: Պեղումները կը շարունակուին Օսմ. Դրամատան քովերը, ամբողջ Յրանի թաղը օլը հանելու սահմանուած շատ մը նրբանցքներ գտնուեցան:

— Սօճիս 11 Մայիս. Հոս չը կարծուի թէ Տէլչէֆ սպանուած կամ վիրաւորուած ըլլայ, ու աւելի կ'ենթադրուի թէ անի Պուլկարիա կամ Մակիդոնիա գտնուի. անունի շիւթութիւն ըլլալու է, թուրքերուն կողմէն յերիւրուած քանի մ'օր առաջ: Ճումայայի

և Սերէդի մօտերը, Տէլչէֆ անունով հրոսախրմբի պետ մը վիրաւորուած է, թուրքերը շատով տարածայնեցին թէ Ներքին կազմակերպութեան պետը Տէլչէֆ է այն անձը, սրուն պուրը 500 օսմ. ոսկիի գրուած է: Եթէ ստոյգ է Տէլչէֆի մահը, զրեթէ անպարմանելիօրէն աղետաբեր պիտի ըլլայ այն, սրովհետև անի՛ միայն կը ճանչնայ կազմակերպութեան բոլոր գաղտնի թելերը, հոգին է անոր, ինք միայն պիտէ թէ ո'ւր պահուած են զէնքերը, տինամիթի մթերքը: Առանց Տէլչէֆի, կազմակերպութիւնը, որ միշտ կրցեր է պահել իր անկախութիւնը հանդէպ պուլկարական գօմիթէներուն, պիտի քայքայուած ըլլայ: Եւ սակայն, միշտ կասկածի տակ է Տէլչէֆի մահը:

— Վիեննա, 11 Մայիս, բացարձակապէս սուտ է Զօնչէֆի մահուան լուրը. զօրավարը, իշխանին մարզը, ուսական քաղաքականութեան շափղին հետևող, խաղաղ կ'ալլի Պուլկարիոյ մէջ, կրէք միացած չ'է հրոսախումբի մը:

— Հնդկիմ, 6 Մայիս. Զրոյց կը պտըտի թէ Աւստրիան ջանքեր ըրած է տէրութիւններէն արտօնուելու, զօրքեր զրկել Մակիդոնիա, երբ որ թուրք զօրքերը չը բաւեն զսպելու ասպտամբութիւնը:

Աւստրիոյ միջամտութիւնը տէրութեանց միաձայն հաւանութիւնը պիտի ձեռք բերէ այն պայմանով միայն որ Աւստրիան ո'ւ է օգուտ մը չ'ուզէ իրեն համար: Բայց կը կարծուի թէ այն պարագային որ միջամտութիւնը հարկաւոր ըլլայ, Պետլինի դաշնագիրը ստորագրող բոլոր տէրութիւնները մէկ մէկ զօրագունդ պիտի զրկեն ինչպէս որ ըրին Չինաստանին համար:

— Անգլո-Պրուսիական Վիգուկ ֆրոնտգօ-իտալականին նման, կազմուելու վրայ է: Բարիդի անգլիական զազմականութեան և ֆրանսացի քաղաքական աշխարհին շատ մը երեկելիները տուած են արդէն իրենց հաւանութիւնը:

Նոր Լիգային նպատակն է սրաաղօզ համաձայնութիւն մը հաստատել Եւրոպային այս երկու ազատական մեծ տէրութեանց միջև: Մօտերս հասարայթ մը պիտի տեղի աւեննայ:

Ամուս Եին, Չորեքշաբթի իրիկունը ժամը Եին, Մանասթըրի Պուլկարները յարձակեցան թուրք զօրքերուն ու բնակչութեան վրայ, ումբեր նեաեցին մզկիթներուն մէջ, պաշտօնապէս ճանչցուած 11 սպաննուած, ու 19 վիրատուածներ կան:

Իսկիւպի մէջ, Մահմետականները կը սպանան շարքել քրիստոնեաները: Սօֆիայէ եկած յեղափոխներ կը գտնուին քաղաքը: Հիւպատուարանները, մասնաւորապէս ըսպանացուած, կը պահպանուին զօրքերէն:

—Սեշաւիկի վերջին դէպքերուն վրայ գրելով Ռուս Հանդէսը հետեւել խորհրդածութիւնները կ'ընէ:

«Երուսական լրագիրները կ'ընդունին թէ ամեն բան իրօք Ռուսիոյ ձեռքերուն մէջ է, և, որովհետեւ սա տուած է արդէն խաղաղութիւնը պահպանելու իր հաստատ կամքին թանկագին զբաւականներ, մէկ եզրակացութեան միայն կարելի է գալ, այսինքն, հակառակ պուլկար շարագործներուն աջ ու ձախ նետած պայթուցիկ ումբերուն, և թերեւս նոյնիսկ ասոր համար, արդէն տաքնապին ամենաւոր շրջանն անցած է:

Իրաւ ճիշդ ատենն է որ Ռուսիոյ ու Աւրասիոյ խնդրանքին վրայ Սուլթանին հրամայած բարենորոգումները գործադրուին:

Թուրքիան լաւ մը վճռած է զսպել պուլկար հրոսախումբերուն ծայրայեղութիւններն ու պատժել զանոնք: Բոլոր Երսնայան — Անգլիան ալ, հակառակ իր վերապահումներուն, իր նախանձատութեան ու իր անվստահութեան — համաձայն է Ռուսիոյ հետ: Աւստրո-Ռուսական համաձայնութիւնը կը մնայ անվճար. ուրեմն բաղձալի է որ պուլկար խռովարարներուն վերջին ոճիրները՝ վերջակէտը դնեն այն խռովութեանց որոնք արդէն խիստ երկար տեւեցին:»

—Մարոֆ. Թանժըրի մէջ մեծ յուզում առաջ բերաւ քաղքին պատերուն վրայ փակցուած յայտարարութիւն մը, որ բոլոր ճըշմարիտ հաւատացեալները զէնքի կը հրաւիրէ քրիստոնեաներուն դէմ:

ՊՍՏԿԵՐՈՋԱՐԴ ՎԱՉԳԷՆ — ԵՐԳԱՐԱՆ

Մեծ զեղչով պլաի ծախուի վեց հարիւր մեծագիր երեսներէ բաղկացած սոյն ընդարձակ Երգարանը, իր մէջ կը պարունակէ բոլոր հին ու նոր երգերը և տասնի չափ նշանաւոր բանաստեղծներու պատկերներ և կենսագրականներ: Գինն է, ճամբու ծախքով միասին, առար մէկ չէնդ տասնհինգ, Երուսայի համար հինգ ֆր. Պարսկաստանի համար չորս ֆր.

Տ. Փանոս Երուրիկեան. Աղերսանդրիա.

Ռաթիպ փաշա փողոց:

Տ. Գ. Կազանչեան, Գահիրէ. Ապտին:

Անգլիերէնի մասնաւոր դասեր աւանդողը — որուն ծանուցումը ժամանակէ մ'ի վեր կը հրատարակուի Փիւնիկի մէջ — կը շարունակէ իր դասախօսութիւնները Պէտրիձի մէթոսով. հիմայ սենի բաւական թիւով աշակերտեր. կը խոստանայ շաբաթը չորս անգամ դաս առնողին սովորեցնել հինգ-վեց ամուսան մէջ գրել, կարգալ ու խօսիլ,

Մանրամասնութեանց ու պայմաններուն համար դիմել Փիւնիկի խմբագրութեան:

ԼԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

Լոզան, Զուիցերիա

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատունը կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական առողջ ու հիմնաւոր կրթութիւն մը, ներդաշնակօրէն միացած ազգային հիմնական դաստիարակութեան մը հետ: Մեր հայ աշակերտներուն կ'աւանդենք, և այս՝ առանց ու եւ է վճարումի՝ հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ. մատենագրութեան պատմութիւն, ևն:

Արեւելեան կրթատան տարեթոշակը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, անմրցելի կերպով չափաւոր է:

Հայ ծնողներու հաւաք մասնաւոր պաշտօնակներ: Ընտանեկան կեանք:

Կրթատանս յայտագիրն ամեն ուզողի կը ղրկուի:

ՏՆՕՐԷՆ Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Տարթ. Ի Գիտութիւնս

Համալսարանական մասնաւոր Ուսուցիչ

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՓԻՒՆԻԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ

Որ կ'սկսի այս տարուան Յուլիսէն հրատարակուիլ Աղեքսանդրիա, նոյն ուղղութեամբ և հարուստ պարունակութեամբ:

Ամենօրեայ Փիւնիկի խմբագիր-Տնօրէնն է ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ, որուն պիտի աշխատակցին երկու օգնական-խմբագիրներ ու մէկէ աւելի թղթակիցներ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով ժողովրդային հրատարակութիւն մը, եւ նպատակ ունենալով քաջալերել յառաջդիմաւոր երիտասարդութեան շարժումները, առ այժմ ասոնց համար մասնաւոր սիւնակ մը կը յատկացնէ, ուր պիտի կրնան երեւիլ մանաւանդ նորահաս գրողներու յօդուածներ, հոգ չէ թէ ասոնք կոչուով ու պաշտօնով խմբագիրներ յորովայնէ ընտրուելու չ'ըլլան, եկամուտը պարտաւորութեան իրեն վերապահելով ո՛ր և է գրութիւն կոկելու իրաւունքը, յօժարակամ պիտի հրատարակէ յօդուածներ, թղթակցութիւններ, բաւական է որ հանրութեան օգտաբեր, ժողովուրդը լուսաւորող գաղափարներ բերեն անոնք:

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով անկախ ու միանգամայն ազատական թերթ մը, պիտի ջանայ մնալ միեւնոյն բարձրութեանը վրայ, շարունակելով անաչտորէն քննադատել հանրային գործերն ու խայտառակել զեղծութիւնները, առանց խնայելու այս կամ այն կուսակցութեան, ազգ. լշիւսանութեան, ևն:

ԾՐԱԳԻՐ

1.— Կը պարունակէ ամեն օրուան հեռագիրները, քաղաքական, ազգային, տեղական, առեւտրական, ևն. ևն առատ, ու թարմ լուրեր:

2.— Անպակաս կ'ունենայ առաջնորդող յօդուած մը, ազգային թէ քաղաքական, զբաղման թէ գիտական նիւթի վրայ:

3 ԹԵՐԹՕՆԸ պիտի յատկացուի բանասիրականին, որուն մէջ պիտի երեւին:

Ա.— Ձեթունականի. ամբողջ, այն է ինը հարիւր տարուան պատմութեան մեծ անցքերը, ցեղախումբերուն հետ լեռնցիներ:

րուն ընդհարումները, հերոսական արշաւանքները, պատերազմները, ևն, ևն, ամբողջը վէպի ձեւով:

Բ. Ձեթունի սովորութիւնները, բարբերը, գաւառաբարբառը, աւանդութիւնները, լեռնական կեանքը, ևն:

Գ. Հայկ. Հարցի վրայ սկիզբէն մինչեւ մեր օրերը լոյս տեսած թեր ու դէմ հրատարակութեանց— բնականաբար զիտանազաններու, ընկերարաններու, ճամբորդներու հեղինակութիւններ— նաեւ այս վերջին քառորդ տարու շրջանին, Երոպայի զանազան կեդրոնները սարքուած հաւաքովիներուն մէջ լսուած բանախօսութեանց թարգմանութիւնները, կլատութիւնի ճառերէն ըսկըսեալ մինչեւ Տիգրան Երկաթիները:

Դ. ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ կենսագրութիւնը, մեռելու որ աւարտի:

Ե. Երկազահայ մեծ մարդերուն կենսագրութիւնը:

Զ. Գիտութեան աշխարհին մէջ երեւցած ամեն նորութիւն, զիտ, բեւեռախոյզ ու երկրախոյզ գիտուններուն ծանօթագրութիւնները, ևն:

Ամենօրեայ Փիւնիկին Չորրորդ էջը պիտի գրաւեն ժամուցումներ, յայտարարութիւններ, հայ թէ օտար վաճառատանց, արհեստաւորներու, շոգենաւային երկաթուղեաց ընկերութեանց ժամանակացոյց ու սակագին, պարգեւաւոր վիճակահանութեանց ցուցակը, սակարանին ելեկները, ևն. ևն:

ՊԱՅՄԱՆՔ

Բաժանորդագրութիւնը կը սկսի ամեն ամսոյ սկիզբէն և կէսէն:

Չեղքէ կը ծախուի հատը հինգ միլիէմի:

	ԵՌԱՄՍ	ՎԵՑԱՄՍ	ՏԱՐԵԿ
Եգիպտոս զրշ.	30	60	120
Աբտասահման ֆր.	10	20	40
Ամերիկա տոլար	2	4	8
Կովկաս ուրլի	4	8	16

Փրանսերէնի, տաճկերէնի եւ օտմարակալութեան հմուտ երկտասարդ մը պատրաստ է պաշտօնավարել վաճառատան մէջ: Աբտասահման ալ կերթայ գոհացուցիչ պայմաններով, զիմիլ խմբագրատունը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գող Մժղօ. վասպուրականի կեանքից, հեղինակ Նշիկ Երեց: Ժամանակակից, այսինքն կէս դար առաջ Հայաստանի կողմերը տեղի ունեցած դէպքեր, վիպականօրէն նկարագրուած, ամբողջութեամբը յանձնարարելի է, չը նայելով գրականութեան կանոններուն դէմ ինչ ինչ մեղանշումներուն, որոնք զգալիօրէն աչքի կը զարնեն յիշեալ զիրքին մէջ, որ վէպ մը չէ, թէ կազմութեամբը թէ՛ ձեւովը, այլ պարզապէս պատմութիւն մը:

Կը վաճառուի Փիւնիկի տպարանը,
հատը երկու ֆրանգի
Հասոյթը յատկացուած է հայրենիքի
որբերուն:

Ճամբորդութեան սպառութիւններ ի Զուիցերիա

ՆՇԱՆ ԿՈՐԿՈՏԵԱՆ

Ստացած ու կարգացած ենք այս գրքոյկը, որ կը պարունակէ փետր. 22 ին Գահիրէի Լսարան-Տնօրէցատան մէջ արտասանուած բանախօսութիւն մը:

Զուիցերիոյ տեղագրութեան հետ պ. բանախօսը յաջողած է ճարտարօրէն պատկերացնել արեւմտեան դժբախտին կենսատու կլիման, դիւթական տեսարանները, վարչական առաւելութիւնները, կն. Սմեն Հայրըով գտնուելու արժանի գրքոյկ մը: Գինն է երեք դրչ. ողջ. Դիմել խմբագրատունը:

ՀԱՄԲԱՐ ԴԱԽԻԹԵԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԴԵՐՉԱԿ

Արքայիսնի մզկիթին դիմաց Մեծ Մկրտաճոյ խանութը
Կը գործածէ՝ սովորաբար անգլիական ու ֆրանսական տոկուն ու ազնիւ կերպասները, չափաւոր գներով, գոհացնելով մինչև իսկ ամենէն նրբաճաշակ յաճախորդներն ու յարգելով իրենց ամենափոքր դիտողութիւնները: Կը պատրաստէ, ի պահանջել հարկին, 24 ժամուան մէջ, ամբողջ գոտտիւմ մը:
Հարիւր զրուշի առևտուրի փոխարէն յաճախորդը կ'ստանայ հարիւր հատ վաճառականական գրոշմաթուղթ, որ հոս կը ծախուի: Դիմեցէք Մեծ Մկրտաճոյ խանութը:

Ս Զ Պ

Թէլէֆօն 33

Նամակատուի թիւ 398

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ • ԳՈՏԱՐՆԵՐ • ԱԴԱՄԱՆԴՆԵՐ • ԱԿՆՈՑՆԵՐ •

L. KRAMER & Co

Հայրաքիչ Ն. Խ. Բարձրութեան

ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ • ԳԱՋԻՐԷ • ԵԳԻՊՏՈՍ

ԳՈՐԾԱՑՈՒՆ ԳՈՂԱՐԵՂԻՆԱԳ

Աղեֆայնդրիա, Տպարան փիլիսոփայ